

Ամբաս Բիւրաս  
Խմբագրութիւն «Փիիէնիկ» Ի  
Աղեֆսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՆՄԱՆ

Չր.  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՅԱՄՍԵԱՅ 25

Յր.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՅԱՄՍԵԱՅ 8

—  
ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՈՒԿ Է

—  
ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎՆ 6

# ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ


ՇԱԲԱԹ 4 ՅՈՒՆՈՒԱՐ 1902

ԹԻԻ 34

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

### ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պոլեգիֆձի)



Ե

Նոր ուղի մը. Թուրք խաւերը. Զարդե-  
րեկ յետոյ. Յեղափոխականը:

(Շար. ԼԲ. քիւէն)

Այսպէս, Հայրենիք ի մէջ յայտու-  
ղաբար հրատարակած շահեկան յոդ-  
ուածներով կ'ուզէր հասցնուիլ ուղղու-  
թիւն մը՝ սալ տոնային կրթութեան,  
հիմնելով զայն Երոպայի նորագոյն  
դրական գաղափարներուն վրայ: Այս  
էր իր համոզումը. պատրաստել առողջ  
սերունդ մը, որ կարող ըլլար մաքու-  
րիլ միջավայրին յարանուն ու կործա-  
նարար ազդեցութեան դէմ. ինք լաւ  
գիտէր թէ՛ հայ ցեղը դարաւոր ստի-  
րեանը մէջ ժառանգած էր սիրող ու  
դրացի բեկամի ցեղերէն շատ մը.

լուրիւններ ու ախտեր, եւ թէ՛ պիտի  
վիճանար սնեխապէս, բարոյապէս ու  
մտաւորապէս, եթէ չը ներառուի ա-  
նոր մէջ նոր արիւն մը՝ փառապաշտու-  
թեան: Գիտէր թէ՛ եկեղեցիներուն կողմ  
ցցուած դպրոցներուն մէջ մանկուծիւնը  
կը խամրէր, սարուէ՛ սարի *սիրացուն*-  
նու թիւը կը բազմապատկուէր, վերա-  
ցական ու զգայնոտ երիտասարդութիւն  
մը կը կազմուէր որ բոլորովին օտար  
էր դարուն դրական ու գիտական շար-  
ժումներուն: Սահմանադրութիւնը հան-  
դէսներով ու երգերով փառաբանող եւ  
ժամաւաճառ ժողովներով անոր նշա-  
նակութիւնը ժխտող ապիկար սերունդ  
մը որ, գաւառներուն խորերը ննուող  
ու հարսահարուող միլիոնաւոր ազ-  
գակիցներուն փնացումը կը դիտէր ոն-  
րագործ անզգայութեամբ մը:

Տիգրան Երկաթ այս ամենը գիտէր  
ու իր ամենօրեայ մտահոգութեան առար-  
կան ըրած էր այս իստուր իրականու-  
թեան դարման մը գտնելը: Ուստի, տոն-  
ային դաստիարակութեան սկզբունք-  
ները փարոգելով ընդհանրացնելու մէջ

չը սեղմեց իր ջանքերը, ուզեց նոր ուժեր ու նոր ազդակներ պատրաստել ազգային կեանքին: Յանդուզն գաղափարը յղացաւ *կառավարութեան դէմ հանելու թուրք լուսամիտ մասը, տապալելու համար Սուլթանին բռնապետական քաղաքականութիւնը:*

Այս կերպով միայն կարելի կը կարծէր բարենորոգումներուն մուծումն ի թուրքիս, որուն անմիջական հետեւանքը պիտի ըլլար հայերուն դիւրացնել Մայր-Հայրենիքին մէջ անգլխութեան համար կռուին լուռ ու մուռ պատրաստութիւնը. զի գիտակցորէն կ'զգար թէ ո՛չ ինչ ձեռնարկուած էր պատշապանողական, եւ թէ՛ ո եւ է լուրջ փորձ մը կատարուած չէր ամբացնելու Հայաստանի կիրճերն ու կապանները:

Օգտուելով իր ուսուցչական պատշոնէն թուրք վարժարանի մը մէջ, այս նպատակին համար ջանաց ուժեղ ազդեցութիւն մ'ի գործ դնել Ահմէտ Միսհաշի վրայ, որ այն քրջանի ազատական հին թուրքերուն մէջ հեղինակաւոր ներկայացուցիչ մը նկատուած էր: Մայրաքաղաքին երեսելիները, քաղաքական անձնաւորութիւններ, գրագէտներ, *Իւլէմաներ* ու պատկառելի շէխեր, Ասիական թուրքիոյ հեռակայ խորերէն եկած, համախմբումներ կ'ունենային Ահմէտ Միսհաշի Պէյզօզի գօնազը, ուր նստերու նիւթ էին աստուածաբանութիւն, գիտութիւններ, արուեստներ ու քաղաքականութիւն: Տիգրան ընդունուած էր այս գումարումներուն մէջ, որ զինք բարձրորէն կը շահագրգռէին, այն յայտնի ու զօրաւոր պատճառով որ կը դիրացնէին իր ծրագիրը. *Ընդվզեցնել թուրքերը:* Բարեկամութիւնն ու յարգանքը կը վայելէր Միսհաշի, որ զանի սէպ կը հրաւիրէր ու մեծ մեծ պատիւներով կ'ընդունէր: Այս քրջանակին մէջ ասեմ մ'ապրեցաւ ու հոն կատարելագործեց իր ուսումնասիրութիւնները, թափանցեց թուրք հոգին, իլեց գաղտնիները,

կամ այսպէս ըսենք, հո՛ն հաւաքեց «Թուրքիան կրնա՞յ ապրիլ»ին աստղաները:

Սակայն, շատ ժամանակ չ'անցաւ, վրայ հասան Հայաստանի Ջարգերը, ի դերեւ հանելու Կարապետի այնքան համահարեղ ծրագիրը, որուն իրագործումը կը հետապնդէր, նախաձեռնելով ազդելով Միսհաշի վրայ ու անոր բարեկամները ներհնելով, բարենորոգումի համբուն մէջ: Ա՛լ հասկցաւ թէ՛ գործելու ժամը հասած էր եւ թէ՛ ամեն նրբամարտի հայրենասէր պատրէր անյապաղ նուիրուի իր ազգին ծառայութեանը, նոյնիսկ մահովը, Հայաստանի ազատագրութեան համար: Խզեց թուրքերուն հետ իր յարաբերութիւնները, զատուեցաւ Ահմէտ Միսհաշէ, հպարտաւորութեամբ մը պարստուելով զանի թէ ինչո՛ւ կը շլանար շնորհներու ցոյցերէն Ապս-Իւլ-Համիդի, որուն — շեշտեց անոր ուղղած նամակին մէջ — ջերմեռանդ ու հլու ծառայութեան մին եղած էր:

Այս խզումը տեղի ունեցաւ Սասունի անդրանիկ ջարդերուն վաղորդայնը: Դեռ նոր հրատարակութեան տուած էր Ռեվիստե Ռեվիսի մէջ *Քամաւ Քաթիպայի* քանի մը բանաստեղծութիւնները, երբ մայրաքաղաքը հասաւ ջարդերուն փսփնելի գոյժը: Երիտասարդ հայրենասէրը զայրացաւ, ու հոգին այնքան գորովալից, ընդվզումի համբան բռնեց. նոյն րոպէին վնոեց ամբողջովին ինքզինքն նուիրել իր ազգի սրբազան դասին, մօտենալով *Հնչակեան* ու *Դրօշակեան* յեղափոխական Գօմիթներուն, որոնց յետոյ քաղաքական առանցքը պիտի ըլլար: Երկուքին ալ կը սիրէր ջանքերը, բայց երբէք ուժ չ'էր ուզեր տալ անոնց յախումն ու աննպատակ գործողութեանց որոնք հակառակ էին քաղաքականութեան: Սեւեռուն գաղափար մ'ունէր անի. *Կիլիկիոն մէջ վառել ապստամբութիւնը*. Կիլիկիան, ուր մարը մտաւ Հայուն ազատութեան արեւը, Կիլիկիան

որուն ծոցէն պէտք էր նորէն ծագել այն :

Պատշէլի հոգի՝ Տիգրան Երկարի, ներէ՛ ուրեմն որ Կիլիկիոյ զաւակի մ'ընկաւ բաղդը քաղ երգելու ու կեանքն արձանագրելու :

Այո՛, հո՛ն, Կիլիկիոյ կիրճերն ու անառիկ լեռները յառած կեցած էին մաքուր յեղափոխականին ու նեմաշիս հայրենասիրին արծուի նայուածները . Տիգրան Երկարի հաննարը հո՛ն կը հաւասար ստեղծել ընդվզումին ու Մեծ Կռուին կռուանը :

Հոս կ'սկսի քաղաքական դերը ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱՐԻՆ. ծածկանուն, զոր սիրած էր ընտել հայ կեանքին փառաւոր էջերուն մէջէն, երկու առիծափայ դէմքերէն — *Արշակունի Տիգրան Մեծ ու Բագրատունի Աշոտ Երկաթ* — երկու փոխ անուններ որոնք սահմանուած էին կարապետել իրեն դէպ ի վսանգին համբան ու Փառքին :

Ս. ԲԻՒՐՍ

### ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՓՈՒՆՁԻ

Տիար Կ. Էսիրնէլեանի ընդ Օր. Վիգորիա Գ. Սարգսեանի ամուսնութեան հանդիսին առթիւ որ տեղի ունեցաւ Դեկտ. 30 երկուշաբթի օրը, մեր անկեղծ շնորհաւորութիւնները յայտնելով, կը փութանք հրատարակել հետեւեալը .

Աղեփանդրիս 29 Դեկտ. 1901

Պատ. Խմբագրութիւն «Փիւնիկ» ազգօգուտ շրագրի

ՍՍՏ

Կը խնդրենք որ բարեհաճիք ձեր յառաջիկայ թերթին մէջ հրատարակել մեր ներփակ յայտարարութիւնը :

Ընդունեցէ՛ք այս առթիւ, մեր շնորհակալեաց հաւաստիք :

Ի Դիմաց Տնօրէն Ժողովոյ  
Աղ. Բար. Ընկերութեան

Ս.Տեմապիր Վ. Ս.Տեմապետի  
Ղ. Ա.ՏՐՈՒՆԻ ՊԵՐՃ ՕՀԱՆԵՍՆ

Աղեփանդրիս 29 Դեկտ. 1901

Տեար Կարապետ Էսիրնէլեանի ընդ Օրիորդ Վիկտորիա Սարգսեանի ամուսնութեան առթիւ՝ փոխան ծաղկեփունջի՝ նուիրած են ընկերութեանս Տէր Եւ Տիկին Արմենակ Կամարական Յ Եւ Տէր Եւ Տիկին Տիգրան Կամարական Յ, գումար 6 անգլիական ոսկի :

Աղիասախնամ Բարեգործական Ընկերութիւնս քաղցր պարսկանուրթին մը կը կատարէ նրապարակալի իրական խնդակցութիւնը յայտնել եւ կատարեալ երջանկութիւն մաղթելով նորապսակ ամուլին՝ այնու զի իրենց արդէն բերկրառիթ միութիւնն պատճառն կըլլայ նաեւ Եգիպտոսի համար բարեգործական դրութեան մը կիրառման, եւ իր ջերմ շնորհակալութիւնը յայտնելով վերոյիշեալ ազնիւ նուիրատուներու՝ այնու զի այդ դրութեան առաջին գործադրողները եւ հետեալքար՝ այլոց ալ ազնիւ գաղափարի մը գործնական թելադրիչները կը հանդիսանան :

Աղիաս. Բարեգ. Ընկերութիւն  
Աղեփանդրիոյ Հայոց

Դաճիք, 31 Դեկտեմբեր 1901

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՆԿԵՂԾՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԸ

Մեծ. Խմբագիր Տէր,

Շաբաթաթերթիդ 32րդ բուռն մէջ Դաճիքէն հաջօ - Ջան ստորագրութեամբ թղթակցութիւն մը երեցած էր, ուր ի մէջ այլոց Գալստեան ազգային վարժարանի բարեկարգութեան մասին աննպաստ ակնարկութիւն մը կար :

Կողմնակցական ոգւով զրուած այդ տո-

դերուն կարեւորութիւն սալ չէր արժեք ար-  
դարեւ: Սակայն մասնաւոր ուշադրութիւնս  
գրաւեցին յօդուածին այն մի քանի տողեր,  
որով Պ. քղթակիցը սլոց յորդոր կը կար-  
դայ պատուաւոր եղանակաւ խօսիլ ու գոր-  
ծել:

Երբ ինքը վեհոգի արիւթեան ու ճր-  
մարտասիրութեան հրաւիրակ կը հանդիսա-  
նայ, միեւնոյն յօդուածին մէջ սակայն ան-  
պակաս սուտ մը կը նետէ մեջտեղ յայտա-  
բարելով թէ *բազմաթիւ* ծնողներ իրենց զա-  
ւակները սկսած են *գունդգունդ* օտար դպ-  
րոցներ դրկել: Արդ կը հարցունենք թէ Պ.  
քղթակիցը մասի վրայ քանի՞ հաս կրնայ համ-  
րել այդ *բազմաթիւ* ծնողներէն:

Ինչպէս որ մենք սուգած ենք, վերջերս  
օտար վարժարան յանախող երկու աշակեր-  
տուհի կայ միայն, որոնց միոյն մայրը հար-  
կեցուցիչ պարագայի սակ Մայրապետներուն  
հով *գիշերօթիկ* դրած է իր զաւակը: Եւ այդ  
օրհորդը վարժարանէն մեկնած օրը մայրը  
յակասպէս զայով վարժարանին պատճօնեա-  
լեան շնորհակալութիւն յայտնած է՝ միեւնոյն  
աստի ցաւելով իր զաւակին վարժարանէն տա-  
րածամ մեկնումին համար: Ահա՛ այսպէս  
մեկ երկու ուսանողներ (մին գիշերօթիկ) Պ.  
քղթակցին կունս գլխին մառախլապատ ու-  
ղեղին մէջ աներ բազմացեր գունդեր են  
կազմեր...:

Խաչօ - Ջա՛ն, հեզ *ձան դուրպա՛ն*. ո՛ւր  
տեսար սա գունդգունդ հայ ուսանողները որ  
Գալստեան վարժարանը բոլով սկսած են  
օտար դպրոցներ յանախել:

Այդպէ՛ս կը մտնեն պատուաւոր եղա-  
նակաւ խօսիլ ու գործելը. այդպէ՛ս կը կա-  
տարես քրթակցի եւ քննադատի պատճօնը:

Հինգ տարիէ ՚ի վեր ո՛ւր էիր: Ասկից  
առաջ ինչո՞ւ երկու տող բան չէիր գրեր,  
երբ վարժարանը ողբալի վիճակի մը մաս-  
նուած էր, երբ հոն մեկ խօսով՝ թո՛ւ եւ  
բռն կը տրէր. ոչ կանոնաւոր հսկողութիւն  
էր ոչ ալ բարեկարգութիւն կար: Ինչո՞ւ լուռ  
կը կենայիր, երբ ամեն դիէն, մանաւանդ  
ծնողաց կողմանէ ՚ի ձայն փողոյ գանգասներ  
կըլլային: Ինչո՞ւ փոքրիկ դիտողութիւն մը  
չէիր ըներ, կրտս՛մ, երբ նոյն իսկ աշակեր-  
տներ դպրոցին *regime*ին դիմ կը բողոքէին:

Այս տղերք գրողը այն բարի ժամա-  
նակներուն մէջ տեսած է (ուրիշ ակամաստ  
վկաներ ալ կան) նոյն վարժարանէն աշա-  
կերտներ, որ Շամցիի արձարանը նստած նստ  
կը խաղային... այն ալ վարժարանին էրին

սակը: Է՛հ, բերեսու քու ըմբռնումովդ այդ  
իսկ է յառաջդիմութիւն եւ բարեկրթու-  
թիւն...:

Մենք ՚ի հարկին կրնանք քանի մը տա-  
նակ ծնողներ ցոյց տալ, որոնք իրենց իրա-  
ւացի գանգասները հոգաբարձու հեծեցիկին  
լսելի ընել տալէ յուսահասած՝ սկսան այն  
ժամանակը իրենց զաւակները ազգային վար-  
ժարանէն հանելով օտար դպրոցներ դրկել  
նշխական մեծամեծ զոհողութեամբ: Ահա  
այն աստիւն էր որ հայ ուսանողներ խումբ  
խումբ օտար վարժարաններ կը յանախէին  
Հոգաբարձու հեծեցիկին մանչ եւ աղջիկ զա-  
ւակներուն հետ:

Այն բարի ժամանակն էր որ տոնային  
դաստիարակութիւն եւ մայրենի լեզու իրենց  
կարեւորութիւնը կորսնցուցած էին: Եւ եթէ  
այդ հոգաբարձու հեծեցիկին կամփին բոլ-  
ուէր, գուցէ հայերէն լեզուն բոլորովին վը-  
տարուէր ազգային վարժարանէ մը՝ սա  
սեանչելի պատճառաբանութեամբ թէ հայերէն  
լեզուն՝ *շահաբեր սպրակն* մը չէր Փարա-  
ւուններու երկրին մէջ: Սակայն տեսակ մը  
*Փայրիզա* նկատուած այդ կրթարանը վերջ ՚ի  
վերջոյ ոչինչ արտադրեց նոյն իսկ շահաբեր  
համարուած *սպրակներէն*: Անանկ որ ՚ի  
գուր անցան երեք երկար տարիներ եւ յում-  
պէս վասնուեցան մեծհոգի Կարապետ Գա-  
լստեանի կսակած ոսկիները:

Բայց, Խաչօ - Ջա՛ն, բնաւ չէին լսուէր  
այն աստիւն քու այդ ողբերդ եւ կոծերդ: Պատ-  
ճառը շատ պարզ է. որովհետեւ տարբեր  
նկատումներ եւ գնում հաշիւներ ձեռքերդ կը  
կաշկանդէին:

Այս խօսքերով բնի չեմ ուզեր թէ  
վարժարանը այսօր կատարեալ բարեկարգու-  
թեան շաղկին մէջ անթերի կ'ընթանայ: Սա-  
կայն քանի որ նախորդ հոգաբարձութիւնը ե-  
րեք տարի տարունակեց պատճօնը, թեւ ա-  
պարդիւն, նորընտր հոգաբարձութեան ալ  
գոնէ տարի մը միջոց տուի հանդարտ մտով  
պատճօնը տարունակելու: (1)

Իսկ դու, ո՛վ բանգէտ քննադատ, եթէ  
իբր ըսածիդ պէս սիրտդ չկրնար հանդուր-

(1) Մխանչելի՛ տրամաբանութիւն. պէտք  
է որ ներկայ հոգաբարձութիւնը շարունակէ  
իր սպարդիւն պաշտօնը. ինչո՞ւ. — որով-  
հետեւ իր նախորդը շարունակ երեք  
տարի վարած է նոյն սպարդիւն պաշտօնը...:

ժել իրերու կացութիւնը, ուրիշներն ալ չեն կրնար հանդուրժել քու կողմնակցական վարմունքիդ, որով ուրիշի մը հանելի ըլլալու համար կելնես այսօր վարժարանին կրթական վիճակը կը խճբծես, ուրիշ օր մ'ալ այս կամ այն ուսուցչին վրայ կը շարախօսես գծուձ հակառակութենէ բելադրեալ:

Յօգուածիդ մէջ տեղ մ'ալ կը յաւելուս քէ չես ուզեր այն ինչ Միջադէպին «աղտոտ կողմերովն գրաւել» «Փիւնիկ»ի սուղ եւ մահուր էջերը. (սեանչելի՛ հայերեն): Սակայն լաւ համազուէ որ չէ քէ ո՛ր եւ է միջադէպի աղտոտ կողմերովը, այլ քու քառակուսի գլխուղ ամբողջ մակերեւոյթովն ալ գրաւելու ըլլաս քերթին էջերը, նորէն կարեւորութիւն չունի. քանի որ նշանակութենէ եւ ուղղամտութենէ զուրկ են գրածներդ: Քանի մը տող գրածիդ մէջ՝ ինչպէս սխալներդ լեզուին տարրական կանոններուն դէմ, նոյնպէս ալ սուտերդ նշանակութեան դէմ կը մեղանշեն: Առաջնոյն համար մտաւոր մը, իսկ երկրորդին համար ալ սանձի մը կը կարօտիս:

Քննադատութիւնը ամեն բանի համար օգտակար եւ անհրաժեշտ է. նա է զարգացման, յառաջդիմութեան միակ խթանը: Սակայն ոչ քու ըմբռնած եւ հետեւած եղանակովդ:

Ինչպէս հրապարակագրի, անանկ ալ քննադատի համար անհրաժեշտ պայմաններ են անկեղծութիւն, ուղղամտութիւն եւ անկաշկանդ միտք: Յատկութիւններ, որոնք քեզ կը պակսին: Դուն ուրիշներու անկեղծութեան, ուղղամտութեան դասեր տուած ասեմդ, այդ գրածովդ իսկ ցոյց կուտաս քէ դու ո՛րքան կը կարօտիս ասոց:

ՏԱՊԱՐ

Ա. Զ. Գ.

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-ԼՍԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան քէ՛ ի նպաստ Հաստատութեան կազմուած վիճակահանութիւնը պիտի քառուի առաջիկայ 1902 տարւոյ յունուարի 5ին (Ն. Տ) կիրակի օրը, երեկոյեան ժամը 4 ին, նայն Հաստատութեան սրահին մէջ:

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

— Գ. Եւ Կ. Մելնոնեան ծխախոտի մեծահամբաւ վաճառատունը, Գահիրէի Աթապա - էլ - Հատրա հրապարակը, հաննարեղ նորութիւն մը կը նմայէ բոլոր յանախորդաց:

Ամանօրի ու Ծննդեան տօներուն մէջ, ամեն յանախորդ որ կը գնէ 100 սիկարա, իրաւունք պիտի ունենայ բացէն ստանալու օրացոյց մը, ինչպէս եւ ուրիշ անակնկալներ, մասնաւոր. տուփի մը մէջ ամփոփուած:

Ամաղ-էօր յանախորդաց ուշադրութեան արժանի է այս նորութիւնը:

— ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԸ որ կազմուեցաւ անցեալ շաբաթ տեղի ունեցած արտակարգ նիստի մը մէջ, կը բաղկանայ բաց ի Ա.Ո.Ժ. Թաղ. Խորհուրդէն, հետեւեալ անձերէն.

ՏԵՍՐԲ. Յովհաննէս Մուքափեանց, Երուանդ Աղաքոն, Ալեքսան Զեփախիւրճեան, Կարապետ Մեղիճեան, Զարեհ Սվալըր, Գեորգ Իփեկեան.

Պատեօնական աղբիւրէ կը հաւաստուի քէ՛ ընտրութեան գործողութիւնները պիտի սկսին մօտերս:

— ԳԵՐ. Տ. ՅՈՎՍԷՓ ՍՐԲՍԶԱՆ ԱՅՎԱԶԵԱՆ ապափնած կրնայ համարուիլ: Նորին Սրբազնութիւնը Դեկ. 30, երկուշաբթի օրը Տիար Կարապետ Էսիրնէլեանի ընդ Օր. Վիզորիա Սարգիսեանի ամուսնութեան պատկադրութեան հանդէսին ներկայ գտնուեցաւ:

— ԿԱՐՆՈՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒՆ համար դեռ Աղեքսանդրիա բան մը չըրաւ: Փափագելի է որ Սրբ. Առաջնորդը ժամ առաջ լուրջ ձեռնարկ մ'ընէ նպաստամատոյց Յանձնաժողով մը կազմակերպելու:

— Ա.ՄԵՆ. Տ. Յարութիւն Սրբազան Պատրիարքի հիւանդութիւնը ծանր մտա-

հոգութիւն կը պատճառէ Երուսաղեմի Պատկ. Միաբանութեան:

Գեր. Տ. Սահակ Սրբազան Խապա-  
եանի հապնեպով վերադարձը կը մեկ-  
նուի այս ծանրակեօն կացութեամբ:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

— ՊԵՅՐՈՒԹԻ Միաց. Նահանգաց հիւ-  
պատար սեղեկացուցած է իր Դեսպա-  
նասանը թէ Տրիպոլ սոյ (սուրիական) կա-  
ռավարիչը հրաման դրկած է Միաց. Նա-  
հանգաց պատկանութեան սակ դրուած  
բոլոր բնակիչներուն թողուլ երկիրը,  
եթէ, մինչեւ 15 օրուան մէջ, չը յայ-  
տարարեն թէ կը հրաժարին այն պատ-  
կանութենէն: Տ. Էսդի, Միաց. Նահան-  
գաց ներկայացուցիչը, այսօր ազդու  
բողոքներ քրաւ Բ. Դրան:

— ԱԹԷՆՔԻ ուսանողները դեռ կը  
շարունակեն իրենց յուզումը Աւեսա-  
րաններուն ուսմական յունարէնի  
թարգմանութեան առթիւ: Դեկտ. 23 ին  
նոր *Միթիկ* մ'ըրած պիտի ըլլան, թէ  
եւ քաղաքացիներն ու իշխանութիւնները  
ձեռք առած են հանդարտութիւնը պա-  
հելու միջոցները:

— ՊԱՐՍԻՅ ԾՈՅՑ. Պատարայէ կ'իմա-  
ցնեն թէ անգլիական հրամանատարը  
Մուզարէի շէրին բնակարանին վրայ  
ծածանող օսմ. դրոշակը վար առած  
ու տեղը դրած է շէրինը, յայտնելու  
համար թէ Քոնէյը կախում չունի Թուր-  
քիայէն:

*Նովոսթի, Ռօսիա, Նուլօ Թան*  
Եւ ուրիշ տաս մը լրագիրներ սաստիկ  
կը մեկնաբանեն Քոնէյի նոր միջա-  
դէպը, որ, իրենց կարծիքով, կ'սպառ-  
նայ ռուսական շահերուն ի Պարսկաս-  
տան եւ կրնայ թելադրել միջազգային  
բարդութիւններ, որովհետեւ քանի մը  
սէրութիւններ ի հարկէ պիտի պահան-  
ջեն փոխարինումներ եթէ Անգլիան տի-  
րանայ Քոնէյի:

Արդէն Պատկանէ *Կաղէթ* ար Ֆրանսի-  
ֆօրի հաղորդուած է թէ ռուսական  
հիւպատար Քոնէյը մեկնեցաւ մասնա-  
ւոր պատկանով մ'իւր կառավարութեան  
կողմէն, որ միեւնոյն աստեւ, հրաման  
տուած է *Վարիակ* գրահատորին երթալ  
Քոնէյի ծոցը:

— ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՎԵՆԵՉՈՒԷԼՍ.  
*Սթանտարի* Պերլինի թղթակիցը կը հե-  
ռագրէ Դեկտ. 22 ին թէ՝ Դերմանիա  
*ուլթիմատում* մը պիտի դրկէ Վենեճա-  
ւիայի կառավարութեան կարգադրելու  
համար ալման պահանջատեարց պա-  
հանջները, եւ համաձայնած է Միացեալ  
Նահանգաց նախագահին հետ ի մասին  
այն նկողական միջոցներուն, զորս  
պիտի կրնայ ձեռք առնել:

— ՌՈՒՍՍԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ Դեկտ. 24 ին  
Դրան ուշադրութիւնը կը հրապարէ մա-  
կեդոնական գոմիթէյին գործունէու-  
թեան անումին վրայ, գլխաւորապէս  
ի Մանասթըր, ուր սպաննութեան փորձ  
մ'եղած է պուլկար մեքապոլիսին  
վրայ, պատժելու համար զանի որ պար-  
սաւած է գոմիթէյին արարքը: Դեսպանը  
դիտողութիւններ քրած է նաեւ Ալբանիոյ  
մէջ Ալբանիացիներէն հարստահարուած  
քրիստոնէից անթիւ բողոքներուն նկատ-  
մամբ:

— ՄԵԾ-ԵՊՍՐՔՈՍ ՍԱՅԻԴ ԲԱՇՄՆ  
յայտարարած է Միւնիք պէյ *Կօլուաի*  
մէկ խմբագրին հետ ունեցած տեսակցու-  
թեան մը մէջ, ոչ անգլիասեր է, ոչ ռու-  
սասեր ո'չ ֆրանսասեր, պարզապէս Թուրք  
է: Սուրբանը զանի անուանած է ո'չ մի  
տեքութեան ազդուելով, այլ միայն կայսրու-  
թեան շահերն աչի առաջ ունենալով:

— ԻՏԱԼԻԱՆ ՌԻ ԴՈՒՌԸ. Դեկտեմբեր  
25 թուականով Կ. Պոլսէն հեռագրուած  
է թէ՝ Բարիզի ու Հռովմի Օսմանեան  
Դեսպանները Դոնէն հրահանգներ ստա-  
ցած են բացատրութիւն մը խնդրե-  
լու, ի մասին Ֆրանս-Եւ-Իտալական  
կարծեցեալ համաձայնութեան որ Ալի-  
րիկեան Տրիպոլսոյ կը վերաբերի:

### ԾՈՎԻՆ ՀԵՏ



Ծովին եզերքը, գիշերուան խաւարին,  
 Իմ ոսկեհիւս օրերէն  
 Յիշատակներ քեւաւորած կը քրոնին,  
 Կուզան, վերքեր կը փորեն,  
 Խորո՛ւնկ վերքեր, խորքերուս մեջ մաւ-  
 նաւած,  
 Վերքերու քով որդնսած:

Հա՛ջ կ'ուզեմ, ո՛հ, աւոքեղու գեթ ա՛յնպէս  
 Ցաւերը, որ կ'զգամ արդ.

Հա՛ջ... ինչպե՛ս շաւ ու խաղաղիւմ ծովին  
 պէս,

Դեռ պահ մ'առաջ անհասկնարս.

Թրջե՛ր այտերս չ'ե կարելի, զի շացեն

Արցունքներս ա՛յ զաւլած են:

3 Յունուար 1901

ՔԻՒՍԱՆ

Աղեփասկորիս

### ԿԱԽԱՂԱՆ ՀԱՆՈՒԱԾ

ՀԱՅԵՐՆ ՈՒ ՊՈՒԼԿԱՐՆԵՐՆ

Այն 2 Հայեր եւ 2 Պուլկարներ ուրոնց համար հրատարակած ենք նախորդ թուով թէ էջիւրնէյի մէջ կախաղան հանուած են, հետեւեալներն են. Զաղարացի [Պուլկարիս] մրգավանառ Յակօբ Կարապետեան եւ Ռոսոսոբոցի դերձակ Օճնիկ Թորոսեան, Գարին-Սպասի գաւառէն Պուլկար Սլավի Զանօ եւ Ֆիլիպեցի նպարավանառ Խրիստօ Եուվան: Ասոնք զիմուորական աստանին առջեւ ամբաստանուած էին թէ աւագակախումբի մը կը պահանջին որ Անդրիանուպօլսի [էջիւրնէ] մօտ Պարսի Ֆրզրլլէ ագարակէն լեռը սանելով սպաննած են էջիւրնէի երեւելիներէն Մուսաճա պէյի որդին Նուրի պէյը:

Ճօթի անուն պարտիզպանն ամբաստանուած է թէ ապաւէն տուած էր այդ պուլկար եւ հայ հրոսախումբի, 7

սարի սաժանակիր աշխատանքի դատարարութեան վարչութեան անդամ է Կիլիկիայի Բայաս քաղաքը:

ԱՐՄԷՆԻԱ

### Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉԲ

Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեւելի հայ տուններուն ծանօթ յանախորդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն.

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել, Աղդարիւն, Ռիւել-էլ-Զահապի,

Attarine Ruelle-el - Zababy

### ՀՐԱԻԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

1887

ԺԶ. ՏԱՐԻ

1902

### "ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ.."

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Ռուսումնասիրքս «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» կը մտնէ իւր գոյութեան 16րդ շրջանը:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն

Տարեկան Տանկասան եւ Այլուր 10 Ֆր.

» Ռուսասան 4 րբ.


ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵՆ

A la Rédaction de la Revue

«HANTESSE»

Vienne (Autriche) VII 2 Mechitharistengasse 4.

# «ԳԵՂՈՒՆԻ»



«ԳԵՂՈՒՆԻ» կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ :

Տարեկան Բաժնեգրինն է 3 Ֆրանկ. 1 րբ. 50 կոպէկ :


Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէտը առանց կրօնքի խտրութեան, կը յատկացնենք Աշգիս Որբիկներուն :

Ապառիկ բաժնետէրերու թիւը բացարձակապէս չընդունուիր. Գիւնը կանխիկ է :

Բաժնեգրին, նամակ, և այլն, Ռուսացի հետեւեալ հասցէին յղելու է

«PAZMAVEB»

ST. LAZARE VENISE (ITALIE)



# ԴԵՂԱՐԱՆ


## ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ջնտիր դեղորայք, սրէսիալիքներ եւ հանքային թարմ շուրեր :

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին :

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ :



# SALAMANDER

## ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդգէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամադրուի 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդգէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու գէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիւնը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւզոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփասանորիս, պզտիկ Մեկնիե Ապուսարսա փողոց թիւ 10

# L'ALLIANCE

## Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամադրուի 5,000,000 ֆրանկ